



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության պատվիրակություն Հայաստանում

Մանուլի և տեղեկատվության բաժին

Ք. Երևան, 24 հուլիսի 2013թ

Մարդասիրական օգնությունը տրամադրվեց շահառուներին

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ավարտեց մարդասիրական օգնության բաշխումը ս.թ մայիսին Արմավիրի մարզում աղետալի կարկուտից տուժած 14 գյուղական համայնքներում:

Արդյունքում, մինչև հուլիսի 15-ը, ՀԿԽԸ Աղետներին արձագանքման թիմը կազմակերպեց 4.020 շահառուի /983 ընտանիք/ մարդասիրական օգնության տրամադրման գործընթացը, որը ներառում էր 2.090 սննդի և հիգիենիկ պարագաների ծանրոցներ և հաշվարկված էր շահառու ընտանիքի սննդի և հիգիենիկ կարիքները 2-3 ամսով բավարարելու համար: Բաշխումը իրականացվեց նախապես մշակված բաշխման չափանիշների և շահառուների ցուցակի համաձայն:

Մարդասիրական օգնության տրամադրումը հնարավոր դարձավ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի /ԿԻԿՄ ՄՖ/ Արտակարգ իրավիճակներին արձագանքման հիմնադրամի /ԱԻԱՀ/ կողմից հատկացված 197.155 եվրո միջոցով, որից 157,724 եվրո հատկացրեց Եվրոպական հանձնաժողովը՝ մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության վարչությունը՝ նախաձեռնած մարդասիրական արձագանքին աջակցելու համար:

Նախապատմություն

2013թ. մայիսի 12-ից 17-ը աղետալի կարկուտի հետևանքով լուրջ վնաս հասցվեց Արմավիրի մարզի 46 գյուղական համայնքներին: Համաձայն Գյուղատնտեսության նախարարության և Արմավիրի արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողովի հաշվետվությունների, ամբողջովին կամ մասնակի վնաս է հասցվել 46 համայնքների գյուղատնտեսական նշանակության դաշտերին ու այգիներին, տուժել է 12.800 ընտանիք, իսկ նախնական վնասի չափը գնահատվում է 28,268,56 միլիարդ դրամ կամ 60 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրոպական հանձնաժողովը ԿԻԿՄ ՄՖ հետ ստորագրել է 3 մլն եվրոյի մարդասիրական աջակցության պայմանագիր՝ աջակցելու Ֆեդերացիայի ԱԻԱ հիմնադրամին: ԱԻԱ հիմնադրամը գումարները հիմնականում տրամադրում է փոքրամաշտաբ աղետների դեպքում, երբ այն չի վերածվում ֆորմալ միջազգային կոչի:

Արտակարգ իրավիճակներին արձագանքման հիմնադրամը հիմնվել է 1985 թ-ին և գործում է նվիրատուների աջակցության միջոցով: Յուրաքանչյուր ժամանակ, երբ Կարմիր խաչի կամ Կարմիր մահիկի որևիցե ազգային ընկերություն աղետին արձագանքելու համար կարիք ունի հրատապ ֆինանսական աջակցության, նա կարող է դիմել ԱԻԱՀ-ին գումար ստանալու նպատակով: Փոքրամաշտաբ աղետների դեպքում ԿԽԿՄ ՄՖ-ն հատկացնում է գրանտներ հիմնադրամից, որը այնուհետև կարող է վերականգնվել նվիրատուների կողմից: ԿԽԿՄ ՄՖ և Եվրոպական հանձնաժողովի միջև կնքված աջակցության պայմանագիրը, հնարավորություն է տալիս վերջինիս վերականգնելու ԱԻԱ հիմնադրամի գումարները՝ առավելագույնը մինչև 3 մլն եվրո, համաձայնեցված արձագանքների դեպքում (որոնք համահունչ են իր մարդասիրական մանդատին):